Թվային Գրագիտություն և Համակարգչային Գիտություն առարկայի չափորոշչային վերջնարդյունքներ

Հայեցակարգ

Առարկաի ուսուցման նպատակը

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի գիտելիքային հիմքը, դրանով փաստարկման կարողությունը և դրա ընթացքում ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքով ապրելուն նախապատրաստելու համար: Այս առարկայի միջոցով մենք կպատրաստենք և կոգևորենք առավել մեծ թվով աշակերտների ընտրել ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ: Բարդ խնդիրներ լուծելու համար արդյունավետ կերպով տեխնոլոգիայի օգտագործումը և դրա ստեղծումը 21րդ դարում համարվում են գրագիտության նոր և հիմնական հմտություններից մեկը:

Թվային գրագիտությունը և համակարգչային գիտություն առարկայի չափորոշիչները արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի երկրորդ դասարանից մինչև ավագ դպրոցի տասներկուերորդ դասարանների աշակերտներին՝ կյանքում հաջողությունների հասնելու համար: Չափորոշիչները ներկայացնում են թվային գրագիտության և համակարգչային գիտության առանցքային տարրերը և նպատակ ունեն ուղղորդել համահունչ և խստապահանջ դասավանդումը, որի արդյունքում աշակերտները վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն առարկայի շրջանակներում ծածկվող գիտելիքը, փաստարկումները և հմտությունները:

Առարկայի արդիականությունը

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայով փոխանցվող հմտությունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ նրանից թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև զվարճանքների և արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, և բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ: Դրանք կարևորն են ինչպես անձնական այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների դռները և տեխնոլոգիական համակարգերը որոնք առկա են տարբեր համայնքներում:

Առարկայի ծրագրի առանձնահատկությունները

2-12րդ դասարանների չափորոշիչները կառուցված են ըստ դպրոցական մակարդակների: 2-4 դասարաններ՝ տարրական դպրոց, 5-9 դասարաններ՝ միջին դպրոց և 10-12 դասարաններ՝ ավագ դպրոց: Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում չափորոշիչները խմբավորված են չորս հիմնական գիտակարգային գաղափարային ուղղություններով՝ Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, Թվային գործիքներն ու համագործակցությունը, Հաշվողական համակարգեր և Հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն: Յուրաքանչյուր ուղղությունը այնուհետև բաժանվում է թեմաների, որոնք բաղկացած են համապատասխան չափորոշիչներից: Առարկայի ուսումնառության գործողությունները ինտեգրված են չափորոշիչների ողջ երկայնքով և օգնում են սահմանել աշխատանքի կատարման նկատմամբ ակնկալիքները, որոնք հստակեցնում են, թե ինչ պետք է իմանան և կարողանան անել աշակերտները:

Տարբեր ուղղություններում ներառված չափորոշիչները երբեմն կարող են սերտորեն փոխկապակցված լինել: Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում և յուրաքանչյուր ուղղությամ

մեջ ներառված չափորոշիչները ցուցադրում են իմացական բարդության լայն շրջանակ, ինչպիսին որ կա Բլումի Վերանայված Տաքսոնոմիայում՝ հիշելու, ըմբռնելու, կիրառելու, վերլծուլեու, գնահատելու և ստեղծելու իմացական կարողության մակարդակներում:

Հաշվողականությունը և Հասարակությունը (ՀևՀ)

Համակարգչային տեխնոլոգիաներով աշխատանքը և դրանց ստեղծումը ազդեցություն ունի բոլոր մարդկանց վրա և ունի գլոբալ հետևանքներ այնպիսի ոլորտների վրա ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, օգնող-օժանդակող տեխնոլոգիաները, սոցիալական ցանցերը, և վերջապես տնտեսության վրա ամբողջությամբ: Հասարակությունը արժևորում է հաշվողական և համակարգչային ոլորտում ստեղծված ամենատարբեր նորարարությունները: Հաշվողականությունը առանցքային բաղադրիչ է բազմաթիվ մասնագիտությունների համար, իսկ թվային մեդիայի բովանդակությունը ազդեցություն է թողնում բոլոր քաղաքացիների և հասարակության վրա ընդհանրապես: Ինտերնետ, մեդիայի, սարքերի հասանելիության գլոբալ անհավասարությունները կարող են բերել արդարության և իշխանության անհավասարակշռված պայմանների: Անձնական գաղտնիության, եթիկայի, անվտանգության և հեղինակային իրավունքի պահպանման սկզբունքները ներգործություն ունեն թվային ապահովության և անվտանգության վրա, ինչպես և ազդում են միջանձնային և հասարակությունների միջև փոխհարաբերությունների վրա:

Թվային գործիքներ և Համագործակցություն (ԹԳՀ)

Թվային գործիքները համակարգչային ծրագրային լուծումներ են, որոնք թվային ֆորմատով արտադրում, բանեցնում կամ պահպանում են տվյալներ (օր՝ տեքստային խմբագիչներ, նկարչական ծրագրեր, նկարների/տեսանյութերի/երաժշտության խմբագրիչներ, սիմուլյատորներ, Համակարգչային դիզայնի կամ հրատարակչական ծրագրեր): Թվային գործիքները կարևոր գործիքներ են հետազոտություն իրականացնելու, հաղորդակցվելու, համագործակցելու և սոցիալական, աշխատանքային կամ անձնական միջավայրեր ստեղծելու համար: Թվային գործիքների արդյունավետ օգտագործումը մեծապես ազդում է դպրոցում կամ աշխատանքում հաջողությանը հասնելու վրա:

Հաշվողական համակարգեր (ՀՇՀՄ)

Հաշվողական համակարգերը պարունակում են բաղադրիչներ, ինչպիսիք են սարքերը, ծրագրային ապահովումները, միջերեսները, և ցանցերը, որոնց միջոցով միանում են համայնքներ, սարքեր, մարդիկ և ծառայություններ: Դրանք մարդ-համակարգիչ գործընկերության միջոցով հնարավորություն են տալիս մարդկանց ստեղծել, համագործակցել և սովորել: Բազմաթիվ հաշվողական համակարգերի դիզայնը թույլ է տալիս մարդկանց վերացնել սխալները, ընդարձակել և ստեղծել նոր համակարգեր: Հաշվողական համակարգերը անընդհատ աշխատելու համար պահանջում են առաջացող համակարգչի ներսի խնդիրների լուծում, և պահպանում/շահագործում:

Հաշվողական կամ Ալգորիթմիկ Մտածողություն (ՀԱՄ)

Հաշվողական կամ ալգորիթմիկ մտածողությունը խնդիր լուծելու գործընթացի տեսակ է, որը պահանտում է մարդուց մտածել նոր ձևով, որը հանարվոր է դարձնում խնդիր լուծելու կամ լուծում ստեղծելու համար օգտագործել համակարգիչ: Արագորեն և ճշգրտորեն ծրագրային ապահովում գործարկելու համակարգիչների կարողությունը, ստեղծում է նոր հնարավորություններ խնդիրներ լուծելու, դրանք մշակելու և ստեղծելու համար: Հաշվարկային կամ ալգորիթմիկ մտածողությունը բնորոշվում է հետևյալ պնդումներով՝

- Մտքերի և խնդիրների վերլուծություն, մոդելավորում և աբստրահում/վերացություն - այնպես որ մարդիկ և համակարգիչները կարողանան աշխատել դրանց հետ:
- Լուծումների և ալգորիթմերի մշակում, որոնց կիրառությամբ հնարավոր է բանեցնել այդ աբստրակտ ռեպրեզենտացիան/ներկայացումը:
- Ճանաչել/գտնել և գործարկել լուծումներ (օրինակ՝ ծրագրեր գրելու միջոցով)

Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների

նկարագրությունը

Արդյունավետ ծրագիրը հիմնված է մանրակրկիթորեն ընտրված այնպիսի բովանդակային չափորոշիչների վրա, որոնք հստակ են, կոնկրետ, կենտրոնացված են և մատուցվում են համաձայնեցված հստակ հաջորդականությամբ:

Թեմաների հաջորդականությունը և դրանց ուսումնառությունը պետք է հիմնված լինի իմացության վրա, թե ինչպես են ժամանակի ընթացքում զարգանում սովորողների գիտելիքը, հմտություններն ու ըմբռնումը: Ինչ և ինչպես ենք աշակերտներին սովորեցնում, պետք է հիմնված լինի ոչ միայն թեմաների վրա, այլև արտացոլի այն առանցքային գաղափարները, որոնք կանխորոշում են, թե ինչպես է այս ոլորտում գիտելիքային բազան կառուցված և ինչպես է այն ստեղծվում: Սովորողներին պետք է խնդրել կիրառել իրենց սովորածը և դրա միջոցով ցույց տալ, թե ինչպես են իրենք մտածում և ընկալում բովանդակությունը:

Ստեղծարարությունը և խնդիրների լուծումը հաշվողական մտածողության և առարկայի արդյունավետ ծրագրի կարևորագույն առանձնահատկություններն են: Հաշվողական մտածողության հմտությունները պահանջում են տարբեր խնդիրներ լուծելով փորձարարություն, ինչպես նաև սարքերի, գործիքների, ծառայությունների և տեխնիկաների և դրանց աշխատանքի հիմքում ընկած սկզբունքների ամուր ընկալում: Զինվելով այս առավել խորքային գիտելիքով, աշակերտներն այնուհետև կարող են ճկուն կերպով օգտագործել առարկայի շրջանակում ձեռքբերվող հմտությունները նոր պրոդուկտներ ստեղծելու, տարբեր խնդիրներ լուծելու, ինչպես նաև միևնույն խնդրի լուծման համար այլընտրանքային եղանակներ դուրս բերելու համար: Խնդիրների լուծումը, պահանջում է մտածել անդրադառնալով սեփական փորձին, համառություն, այլոց գաղափարներից սովորելու կարողություն և քննադատական հայացքով սեփական աշխատանքին վերադառնալու կարողություն: Աշակերտները պետք է կարողանան ներկայացնել իրենց գաղափարները և համագործակցել մյուսների հետ: Նրանք պետք է կարողանան վերլուծել իրավիճակը և հիմնավորել իրենց կողմից առաջարկվող լուծումները:

Թվային գործիքների, հաշվողական սարքերի և ծառայությունների ուսումնական միջավայրում ինտեգրվելուն զուգընթաց, և աշակերտների գիտելիք և հմտություն ստանալուն ու դրանք վերափոխելուն ու նորը ստեղծելուն համընթաց, բացվում են սովորելու նոր հնարավորություններ: Ծարժուն երկրաչափական ապլետները (ապլետը շատ փոքր ծրագիր է, որը կատարում է մեկ կամ մի քանի պարզ գործողություն), օրինակ, օգնում են աշակերտներին վիզուալիզացնել և ըմբռնել բարդ մաթեմատիկական գաղափարները: Սիմուլյացիոն կամ մոդելավորող ծրագրերը թույլ են տալիս աշակերտներին հետազոտել իրական կյանքում հանդիպող խնդիրների մոդելներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և բնակչության աճը:

Խնդիրներ ստեղծելու և դրանք լուծելու հաջողակ փորձերը առաջացնում են եռանդ և մեծ հետաքրքրություն: Աշակերտները սովորում են լուծել առօրյա կյանքում, հասարակության մեջ և աշխատավայրում առաջացող խնդիրներ:

Գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրությունը

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի շրջանակում աշակերտների ուսումնառության գնահատումը պետք է լինի բազմաթիվ տարբեր ձևերով, որոնցով պայմանավորված կլինեն նաև դասավանդման ու ուսումնառության գործընթացը:

Գնահատումը արտացոլում է դասարանային աշխատանքում ակնարկվող արդյունքները և ցույց է տալիս աշակերտի ուսումնառության այն վերջնարդյունքները, որոնք հիմնված են գիտելիքի և աշխատանքի կատարման (performance) նպատակների վրա: Սույն չափորոշիչներում ներկայացված վերջնարդյունքների հավաքածուն առարկայի գիտելիքի և կատարողականի նպատակներ սահմանելու համար գլխավոր սկզբնաղբյուրն է: Գնահատումը օգնում է ուսուցիչներին բարելավել դասարանային պրակտիկան, պլանավորել կրթական ծրագիրը, կրթել և զարգացնել ինքնուրույն ուղորդվող սովորողների, զեկուցել սովորողների առաջընթացի մասին և գնահատել ծրագրերը: Այն

օգնում է տալ աշակերտներին պատշաճ հետադարձ կապ այն մասին, թե ինչպես են իրենց գիտելիքը և հմտությունները զարգանում և ինչ է հնարավոր անել աշխատանքը բարելավելու համար: Գնահատումը թույլ է տալիս ծնողներին իմանալ, թե ինչպես է իրենց երեխաների առաջադիմությունը և ինչ է հնարավոր անել այն բարելավելու համար:

Գնահատման տարբեր տեսակի գործողություններից ստացվող ախտորոշիչ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին փոփոխել և հարմարեցնել իրենց օրըստօրե կամ շաբաթից շաբաթ կիրառվող գործողություններ, նպաստելով աշակերտների առաջադիմության բարելավմանը: Գոյություն ունեն գնահատման բազմաթիվ տեսակներ, ինչպիսիք են թղթով և գրչով թեստերը, աշխատանի կատարման գնահատումը, հարցազրույցները, պորտֆոլիոները, ինչպես նաև սակավ ֆորմալ ձևերը, ինչպիսին է օրինակ կանոնավոր դիտարկումներն այն բանի թե ինչպես է աշակերտը արձագանքում դասավանդմանը: Հաշվի առնելով այն, որ այս չափորոշիչներում հատուկ շեշտադրվում է ուսումնառության գործողությունների դերը, պետք է մշակել աշխատանքի կատարման վրա հիմնված գնահատման ձևեր, որը թույլ կտա աշակերտներին ցուցադրել, թե ինչ են նրանք սովորել իրական աշխարհում առկա խնդիրների և գիտելիքի կիրառման համատեքստում:

Ուսումնական գործունեության տեսակները

Ուսումնական գործունեության տեսակները նպաստում են վերաբերմունքի և հմտությունների ներքինացմանը, որը աշակերտը կիրառելու է թվային գրագիտության և համակարգչային գիտության խնդիրներ լուծելիս: Աշակերտները տարեց տարի կրթական ծրագրով առաջ շարժվելով պետք է անցնեն ավելի ու ավելի բարդ ուսումնական գործունեության տեսակներով: Արդյունավետ դասավանդումը զուգորդում է ուսումնառության գործողությունները թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի բովանդակության հետ և տալիս աշխատանքի կատարման առավել հարուստ համատեքստ:

Ուսումնական գործունեության տեսակների հիմքում ընկած են ինչպես Թվային Գրագիտություն և Համակարգչային Գիտություն առարկային հատուկ 7 տեսակները, որոնք ներկայացված են ստորև, այնպես էլ Գիտության և Ճարտարգիտության 8 պրակտիկաները, որոնց հակիրճ նկարագրությունը տրված է վերջում: Ուսումնական գործունեության տեսակների այս երկու խմբերը առավել մանրամասն կներկայացվեն ուսուցչական ձեռնարկներում և կներառեն ըստ դպրոցական մակարդակների պրակտիկաների կիրառման հստակ գործողություններ և օրինակներ:

1. Ստեղծել

Թվային գրագիտությունը և համակարգչային գիտությունը գիտակարգեր են, որոնցում աշակերտը ցուցադրում է իր ստեղծարար մտածողությունը, կառուցում է գիտելիք և տեխնոլոգիան օգտագործելով մշակում է նորարարական արտիֆակտեր/աշխատանքներ և գործընթացներ: Աշակերտները ներգրավում են հաշվողականության ստեղծարար կողմից՝ նախագծելով և մշակելով հետաքրքիր հաշվողական արտեֆակտներ/աշխատանքներ և կիրառելով սովորած մեթոդները խնդիրները ստեղծագործաբար լուծելու համար:

2. Միացնել

Հաշվողականության ոլորտում զարգացումները ունեն շատ ավելի մեծ ազդեցություն հասարակության վրա և բազմաթիվ կարևոր նորարարությունների պատճառ են դարձել: Այդ զարգացումները առնչվում են ինչպես անհատ մարդկանց, հասարակությանը, կոմերցիոն շուկաներին, այնպես էլ նորարարություններին: Աշակերտները ուսումնասիրում են այդ ազդեցությունները և միմյանց մյացնում հաշվողական տարբեր գաղափարներ:

3. Աբստրահում/վերացարկում

Հաշվողական մտածողությունը պահանջում է հասկանալ և կիրառել տարբեր մակարդակների վերացարկում: Աշակերտները օգտագործում են վերացարկումը մոդելներ կառուցելու և տեղեկատվությունը դասակարգելու ու կառավարելու նպատակով:

4. Վերլուծել

Աշակերտները կիրառում են քննադատական մտածողության և վերլուծական հմտությունները

տեղեկատվությունը, տեղեկատվական աղբյուրները և իրենց և այլոց ստեղծած հաշվողական արտեֆակտերը/աշխատանքները դիրքավորելու/տեղադրելու, գնահատելու և վերլուծելու համար:

5. Հաղորդակցվել

Հաղորդակցությունը երկու և ավելի մարդկանց միջև տեղեկատվության արտահայտումն ու փոխանակցումն է: Հաղորդակցությունը ներառում գրավոր և բանավոր ձևեր, ինչպես նաև առարկական ներկայացումներ/ռեպրեզենտացիաներ, որոնք լինում են գրաֆիկների, վիզուալիզացիաների, ներկայացումների, պատմությունների և վերլուծությունների տեսքով: Արդյունավետ հաղորդակցությունը ճշգրիտ է, պարզ, հակիրճ, համոզիչ և պատասխանատու:

6. Համագործակցել

Մարդիկ թիմերով համագործակցելով, նույն վայրում կամ աշխարհով մեկ, հաճախ կարող են հասնել ավելիին քան առանձին առանձին աշխատելով: Արդյունավետ համագործակցությունը հիմնվում է տարբեր տեսակետներ, հմտությունների, գիտելիքի և վերաբերմունքի վրա, որով արձագանքում են թիմի անդամները բարդ, հաճախ հստակ պատասխան չունեցող խնդիրներով զբաղվելիս կամ նպատակ ունենալիս:

7. Հետազոտել

Աշակերտները կիրառում են թվային գործիքներ, տեղեկատվությունը օրինական, ապահով և էթիկապես ճիշտ կերպով հավաքագրելու, գնահատելու և օգտագործելու համար:

Գիտության և ճարտարագիտության պրակտիկաները

Դասավանդման և ուսումնառության գործողությունները, կամ կիրառվող պրակտիկաները նկարագրում են գիտնականների կողմից կիրառվող այնպիսի վարքագծեր/աշխատանքի եղանակներ, որոնք դրսևորվում են այն ժամանակ, երբ նրանք հետազոտում են, կառուցում են բնության աշխարհի մասին մոդելներ և տեսություններ, ինչպես նաև

1. Հարցադրումներ անել և խնդիրներ սահմանել

Գիտության պրակտիկան ենթադրում է ձևակերպել և կատարելագործել այնպիսի հարցեր, որոնք հանգեցնում են նրան թե ինչպես ենք մենք նկարագրում և բացատրում այն թե ինչպես է բնական և նախագծված աշխարհը աշխատում և ինչն է հնարավոր էմպիրիկ եղանակով ստուգել:

2. Մշակել և օգտագործել մոդելներ

Գիտության և ճարտարագիտության այս պրակտիկան առաջարկում է օգտագործել և կառուցել մոդելներ, որոնք հանդես են գալիս որպես գաղափարների և բացատրությունների ներկայացման համար օգտակար գործիքներ: Այդ գործիքները ներառում են սխեմաներ, պատկերներ, ֆիզիկական նմուշներ, մաթեմատիկական ներկայացումներ, անալոգներ և համակարգչային սիմուլյացիաներ:

3. Պլանավորել և իրականացնել հետազոտություններ

Գիտնականներն ու ճարտարագետները պլանավորում և իրականացնում են հետազոտություններ դաշտային պայմաններում կամ լաբորատորիաներում, անհատապես կամ միմյանց հետ համագործակցությամբ: Նրանց հետազոտությունները համակարգային են և պահանջում են հստակեցնել, թե ի՞նչն են համարելու տվյալ և գտնել փոփոխականներն ու պարամետրերը:

4. Վերլուծել և մեկնաբանել տվյալներ

Գիտական հետազոտություններից ստացվում են տվյալներ, որոնք անհրաժեշտ է վերլուծել՝ դրանցից իմաստ դուրս բերելու նպատակով: Քանի որ տվյալների օրինաչափությունները և միտումները միշտ չէ որ ակնհայտ են լինում, գիտնականները օգտագործում են մի շարք գործիքներ, ներառյալ տվյալների վերածումը աղյուսակների, գրաֆիկական մեկնաբանությունները, վիզուալիզացիաներն ու վիճակագրական վերլուծությունները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում գտնել տվյալների կարևոր հատկություններ և օրինաչափություններ: Գիտնականները գտնում են հետազոտության մեջ սխալների աղբյուրները և հաշվարկում են արդյունքների ճշգրտության աստիճանը: Ժամանակակից տեխնոլոգիաները դարձնում են մեծաքանակ տվյալների հավաքագրումն ավելի դյուրին, այդպիսով

ստեղծելով վերլուծությունների համար օգտագործվող երկրորդական աղբյուրներ:

5. Օգտագործել Մաթեմատիկական և Հաշվողական մտածողություն

Եվ գիտության և ճարտարագիտության ոլորտներում մաթեմատիկան և հաշվողականությունը հիմնական/ֆունդամենտալ գործիքներ են, որոնցով ներկայացվում են ֆիզիկական փոփոխականներն ու նրանց միջև կախվածությունները: Դրանք օգտագործվում են մի շարք առաջարդրանքներում, ինչպիսիք են սիմուլյացիաների կառուցումը, տվյալների վիճակագրական վերլուծությունը և քանակական կախվածությունների հայտնաբերումը, արտահայտումը և կիրառումը:

6. Կառուցել բացատրություններ և նախագծել լուծումներ

Գիտության արդյունքը բացատրություններ են, իսկ ճարտարգիտության արդյունքը՝ լուծումներ

7. Ներգրավվել ապացույցից բխող փաստարկելու/հիմնավորելու մեջ

Փաստարկումը/հիմնավորումը գործընթաց է, որի միջոցով հասնում ենք բացատրությունների և լուծումների

8. Ստանալ, գնահատել և հաղորդել տեղեկատվություն

Գիտնականներն ու ճարտարագետները պետք է հստակ և համոզիչ կերպով կարողանան հաղորդել իրենց ստեղծած գաղափարներն ու մեթոդները: Անհատապես կամ խմբերով գաղափարներ քննադատելն ու հաղորդելը խիստ կարևոր մասնագիտական գործունեություն է:

Առարկայական չափորոշչային վերջնարդյունքներ - Տարրական դպրոց

1	ՀՄԳ4.ՀՄՀ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ	Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրներից վերականգնվելու եղանակները, արդյունավետ կերպով պայքարել կիբեր բռնարարության/կռվարարության դեմ:
1.1.1	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.1	Անվտանգ կերպով օգտագործել Էլեկտրական/Էլեկտրոնային սարքերը
1.1.2	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.2	Գաղտնի պահել անձնական տեղեկատվությունը՝ հասկանալով թե ինչու է դա անհրաժեշտ: Գաղտնի պահել գրանցվելու և համակարգեր մուտք գործելու տվյալները և ճիշտ կերպով դուրս գալ համակարգերից և սարքերից:
1.1.3	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.3	Բացատրել թե ինչ է գաղտնաբառը և ինչու է անհրաժեշտ դրանք օգտագործել: Օգտագործել բարդ գաղտնաբառեր անձնական սարքերը և տեղեկատվությունը չարտոնված հասանելիությունից պաշտպանելու համար:
1.1.4	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.4	Ճանաչել առցանց հաղորդակցության ապահով և անապահով օրինակները: Իմանալ թե ինչպես և ում հաղորդել անթույլատրելի թվային բովանդակությունն ու անձանց վերաբերող տեղեկությունը:
1.1.5	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.5	Սահմանել լաբ թվային քաղաքացի լինելու բնութագրիչները, որոնք առնչվում են տեխնոլոգիայի ապահով, պատասխանատու և էթիկապես ճիշտ օգտագործմանը:
1. 2	ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական ասպեկտները:
1.2.1	ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.1	Մյուսների հետ առցանց աշխատելիս դրսևորել հարգալից և պատասխանատու վարվեցողություն:
1.2.2	ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.2	Համակարգչային ծրագրեր մշակելիս ուրիշների մտքերն ու ստեղծածները օգտագործելիս տալ համապատասխան վերագրումներ:
1.2.3	ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.3	Հասկանալ հեղինակային իրավունքի հիմնական գաղափարը:
1. 3	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱԶԴ	Քննել տեխնոլոգիայի, օգնական տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիբեր հանցագործությունների ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱԶԴ.1	Համեմատել թե ինչպես են մարդիկ ապրել և աշխատել մինչև համակարգչային տեխնոլոգիաների իրագործումն ու որդեգրումը և դրանից հետո:
1.3.2	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱԶԴ.2	Քննարկել այն համակարգչային տեխնոլոգիաները, որոնք փոխել են աշխարհը և արտահայել այն թե ինչպես են այդ տեխնոլոգիաները ազդել մշակութային որոշակի գործելակերպի վրա և նույն գործելակերպից ազդեցության ենթարկվել

2	ՀՄԳ4.ԹԳԾ	**ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
2. 1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները
2.1.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕԳՏ.1	Ընտրել և գործարկել համապատասխան համակարգչային ծրագրեր՝ բազմազան առաջադրանքներ կատարելու համար և ճանաչել, որ օգտատերերը ունեն իրենց կողմից օգտագործվող տեխնոլոգիայի նկատմամբ տարբեր կարիքներ և նախընտրություններ:
2. 2	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը
2.2.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ.1	Օգտագործելով ճիշտ տերմինաբանություն նկարագրել այն քայլերը և որոշումները, որոնք կայացվում են համակարգչային ծրագրի իտերատիվ/կրկնվող գործընթացում:
2.2.2	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ.2	Նկարագրել ծրագրավորման ընթացքում կատարված ընտրությունները օգտագործելով կոդի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
2. 3	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕՊՏ	Թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ անհատական աշխատանքը և համագործակցությունը օպիմալացնելու նպատակով կատարել հետազոտություն:
2.3.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕՊՏ.1	Մտագրոհի միջոցով գտնել ուղիներ օգտատերերի բազմազան կարիքներին և ցանկությունների առնչվող տեխնոլոգիական պրոդուկտների հասանելիությունը և օգտակարությունը բարելավելու համար:
3	ՀՄԳ4.ՍՐՔ	**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**
3. 1	ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ	Հասկանալ թե ինչպես են սարքերը աշխատում և հատուկ առաջադրանքների համար ընտրել ու օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն
3.1.1	ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.1	Հաշվողական համակարգերի (սարքերի) ընդհանուր ֆիզիկական բաղադրիչների գործառույթը ճանաչելիս և բնութագրելիս օգտագործել համապատասխան տերմինաբանություն.
3.1.2	ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.2	Պահպանել, պատճենել, փնտրել, վերականգնել, փոփոխել և ջնջել տեղեկատվությունը՝ օգտագործելով համակարգչային սարք և սահմանել այն տեղեկատվությունը որը պահպանվում է որպես տվյալ:
3. 2	ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ	Օգտագործել խնդրների լուծման եղանակներ, համակարգչային սարքերի և ծրագրերին առնչվող խնդիրները լուծելու համար:
3.2.1	ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ.1	Նկարագրել համակարգչային սարքերի և ծրագրերի հիմնական խնդիրները, օգտագործելով ճշգրիտ տերմինաբանություն:
3.2.2	ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ.2	Որոշել հնարավոր լուծումները, հանրորեն հայտնի եղանակներով համակարգչային սարքերին և ծրագրերի առնչվող պարզ խնդիրները լուծելու համա:
3. 3	ՀՄԳ4.ՍՐՔ.ՑՆՑ	Հասկանալ թե ինչպես և հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
3.3.1	ՀՄԳ4.ՍՐՔ.ՑՆՑ.1	Մոդելավորել թե ինչպես է տեղեկատվությունը մասնատվում ավելի փոքր մասերի, ցանցի և ինտերնետի մեջ առկա բազմաթիվ սարքերի միջոցով փոխանցվում փաթեթներով (packets) և նպատակային կետում կրկին հավաքվում մեկ ամբողջության մեջ:
4	ՀՄԳ4.ԱՄՏԾ	**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ և ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

4. 1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ	Ընդհանրացման, մասնատման և աբստրակցիայի միջոցով ստեղծել նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
4.1.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.1	Մոդելավորել թե ինչպես են համակարգչային ծրագրերը պահպանում և բանեցնում տվյալները՝ տեղեկատվությունը ներկայացնելու համար օգտագործելով թվեր և այլ սիմվոլներ:
4.1.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.2	Հավաքագրել և ներկայացնել նույն տվյալները տարբեր տեսողական ֆորմատներով:
4.1.3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.3	Մասնատել (բաժանել կտորների) այն քայլերը, որոնք անհրաժեշտ է կատարել հրամանների ճշգրիտ հաջորդականության միջոցով խնդիրը լուծելու համար:
4.1.4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.4	Ստեղծել ծրագրեր, որոնք օգտագործում են փոփոխականներ, տվյալներ պահելու և դրանք փոփոխելու համար:
4. 2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈԴ	Իրականա կյանքի դեպքերի/իրադարձությունների ռեպրեզենտացիան ընդհանրական մոդելների միջոցով:
4.2.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈԴ.1	Կանխատեսումներ անելու նպատակով, ճանաչել և նկարագրել նմանություններ/օրինաչափություններ գրաֆիկների և աղյուսակների պես տվյալների վիզուալիզացիաներում:
4.2.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈԴ.2	Օգտագործել տվյալներ՝ պատճառահետևանքային կապեր և ելքի կանխատեսումներ ընգծելու կամ առաջարկելու, ինչպես նաև գաղափարը հաղորդելու նպատակով:
4. 3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված ծրագրավորման լեզուների ալգորիթմերի մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
4.3.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.1	Մոդելավորել առօրյա գործընթացները, որևէ գործողություն կամ առաջադրան ավարտին հասցնելու համար ստեղծելով և հետևելով ալգորիթմերի (քայլ առ քայլ հրամանների խմբեր):
4.3.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.2	Մշակել համակարգչային ծրագրեր, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ, և որոնց միջոցով հնարավոր արտահայտել որևէ գաղափար կամ լուծել որևէ խնդիր:
4.3.3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.3	Ուղղել (գտնել և ուղղել) սխալները այնպիսի ալգորիթմերում կամ ծրագրերում, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ:
4.3.4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.4	Մասնատել (բաժանել կտորների) խնդիրները, ստանալով ավելի փոքր և ավելի դյուրորեն կառավարելի ենթախնդիրներ և դրա միջոցով հստակեցնել և դյուրինացնել համակարգչային ծրագրի մշակման գործընթացը:
4.3.5	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.5	Օգտագործել իտերատիվ/կրկնվող գործընթաց, համակարգչային ծրագրի մշակումը պլանավորելու համար՝ ներառելով մյուսների տեսակետերը և հաշվի առնելով օգտատերերի նախընտրությունները:
4.3.6	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.6	Փոփոխել, վերախմբավորել, խառնել կամ միավորել առկա ծրագրի հատվածներ, նոր սեփական աշխատանք ստեղծելու, որևէ նոր բան մշակելու կամ եղածին ավելի առաջադեմ առանձնահատկություններ ավելացնելու համար:
4.3.7	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.7	Թեստավորել և ուղղել (գտնել և ուղղել) ծրագրի կամ ալգորիթմի սխալները՝ համոզվելով որ այն աշխատում է նախատեսվածին համապատասխան:
4.3.8	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.8	Ուսուցչի ուղղորդմամբ, համագործակցելով ընկերների հետ, համակարգչային ծրագրի մշակման, իրագործման և վերանայման/ստուգման փուլերում, ստանձնել տարբեր դերեր:
4.3..9	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.9	Նկարագրել թե ինչպիսի ընտրություններ/որոշումներ են կայացվել համակարգչային ծրագրի մշակման փուլում, օգտագործելով կոդի

		մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
4. 4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները
4.4.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.1	Մշակել պլան, որը նկարագրում է համակարգչային ծրագրի դեպքերի հաջորդականությունը, նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները:
4.4.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.2	Համեմատել և կատարելագործել նույն առաջադրանքի կատարման համար օգտագործվող բազմատեսակ ալգորիթմեր և որոշել, թե որն է ամենա համապատասխանը:
4. 5	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՍՄ	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ, ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՍՄ.1	Կազմակերպել և տեսանելի ներկայացնել հավաքագրված տվյալները, այնպես որ հնարավոր լինի ընգծել դրանց միջև փոխհարաբերությունները և պաշտպանել պնդումը:

Առարկայական չափորոշչային վերջնարդյունքներ - Միջին դպրոց

1	ՀՄԳ9.ՀՄՀ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ	Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրներից վերականգնվելու եղանակները, արդյունավետ կերպով պայքարել կիբեր բռնարարության/կռվարարության դեմ:
1.1.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.1	Նկարագրել տեղեկատվությունը հանրայնացնելու և այն գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները:
1.1.2	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.2	Բացատրել թե ֆիզիկական և թվային ինչ միջոցներով է հնարավոր պաշտպանել էլեկտրոնային տեղեկատվությունը
1.1.3	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.3	Քննարկել իրական աշխարհում առկա կիբերանվտանգության խնդիրները և այն թե ինչպես է հնարավոր պաշտպանել անձնական տեղեկատվությունը
1.1.4	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.4	Ճանաչել տեխնոլոգիայի պատշաճ և ոչ ճիշտ օգտագործման օգտագործման եղանակները կամ դեպքերը այն ժամանակ, երբ կատարում ենք պոստեր սոցիալական մեդիայում, ուղարկում են էլեկտրոնային նամակներ կամ տեքստեր և շրջորոնում ենք ինտերնետը:
1.1.5	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.5	Հասկանալ սարքերի ապահով և արդյունավետ օգտագործման այն վտանգները (օր.՝ ՍՊԱՄ, ֆիշինգ, վիրուսներ), որոնք առնչվում են տեխնոլոգիայի օգտագործման տարբեր ձևերին (օր.՝ ծրագրային ապահովումներ ներբեռնելիս և տեղադրելիս/օգտագործելիս, հիպերհղումներ/հղումներ ակտիվացնելիս, ֆայլեր բացում բացելիս)
1.1.6	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.6	Ճանաչել կիբեր բռնարարության/կռվարարության տարբեր տեսակները և իմանալ թե ինչպես վարվել դրանց հետ:
1.1.7	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.7	Ճանաչել համայնքում առկա այն ռեսուրսները, որոնք կարող են մարդկանց համար ապահովել հասանելիություն տեխնոլոգիային (օր.՝ գրադարաններ, հայորդաց տներ, համայնքային կենտրոններ, կրթական ծրագրեր, դպրոցներ, սարքեր և համակարգչային ծրագրեր նվիրաբերող նախագծեր):

1.1.8	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.8	Բացատրել գաղտնիությանն առնչվող այն մտահոգությունները, որոնք առկա են տվյալների հավաքագրման և առաջացման գործողություններին և որոնք տեղի են ունենում ավտոմատացված գործընթացների շնորհիվ և հնարավոր է ակնհայտ չլինեն այլ համակարգի օգտատերերին:
1.1.9	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.9	Նկարագրել և դրսևորել անվտանք, պատշաճ և պատասխանատու գործելակերպ, առցանց համայնքներում մասնակցություն ունենալիս:
1.1.10	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.10	Խորհուրդ տալ անվտանգության այնպիսի միջոցներ, որոնք աշխատանքի և օգտագործման տարբեր իրավիճակներում հաշվի կառնեն արդյունավետության, կենսունակության և էթիկական ազդեցության գործոնները:
1.1.11	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.11	Տեղեկատվության ապահով փոխանցումը մոդելավորելու նպատակով կիրառել ծածկագրման բազմակի մեթոդներ: Համեմատել անվտանգության տարբեր միջոցներ, հաշվի առնելով հաշվողական համակարգի օգտակարության և անվտանգության դրական և բացասական կողմերը:
1.1.13	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.13	Բացադրել հաքերության դրական և վատ նպատակները:
1. 2	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական ասպեկտները:
1.2.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.1	Ներկառուցել առկա ծրագրային կոդը, մեդիան և գրադարանները ելքային ծրագրերում և տալ պատշաճ վերագրում: Թվել և բացատրել լիցենզիաների գլխավոր տեսակները:
1.2.2	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.2	Ծրագրեր ստեղծելիս կամ վերակազմավորելիս պահպանել մտավոր սեփականության իրավունքը և տալ համապատասխան վերագրումներ:
1.2.3	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.3	Օգտագործել հանրային բաց տարածքի կամ "ստեղծագործ համայնքներում" (creative commons) տեղադրված մեդիա նյութերը և զերծ մնա առանց թույլտվության մյուսների կողմից ստեղծված նյութերի պատճենումից կամ օգտագործումից:
1.2.4	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.4	Ռեսուրսներ (ինչպիսիք են գրադարանները) օգտագործելիս, գնահատել լիցենզիաների այն տեսակները, որոնք սահմանափակում կամ արգելում են հաշվարկային արտեֆակտերի/աշխատանքների օգտագործումը
1.2.5	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.5	Բացատրել թե ինչպիսի օգտակար և վնասակար ազդեցություն կարող են ունենալ մտավոր սեփականության օրենքները նորարարության վրա:
1.2.6	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.6	Հասկանալ GNU, Ընդհանուր Հանրային Լիցենզիայի, Բաց ծրագրային կոդով ապահովման գաղափարները:
1.2.7	ՀՄԳ9.ՀՄՀ.ԻՐԿ.7	Գնահատել ապահովության, օրենքների և էթիկայի համատեքստում գաղտնիության սոցիալական և տնտեսական հետևանքները:
1. 3	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱԶԴ	Քննել տեխնոլոգիայի, օգնական տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիբեր հանցագործությունների ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱԶԴ.1	Համեմատել մարդկանց առօրյա գործունեության և մասնագիտական ուղիների վրա ազդող համակարգչային տեխնոլոգիաների վատ և լավ դրսևորումները:
1.3.2	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱԶԴ.2	Քննարկել առկա տեխնոլոգիաների դիզայնում կողմնակալության հասանելիության խնդիրները
1.3.3	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱԶԴ.3	Գնահատել թե ինչ ձևով է հաշվողականությունը ազդում մարդկանց անձնական, էթիկական, սոցիալական, տնտեսական և մշակութային գործելակերպի վրա:
1.3.4	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱԶԴ.4	Ստուգել և կատարելագործել հաշվողական արտիֆակտները/աշխատանքները՝ նվազեցնելով կողմնակալությունը և հավասարության պակասը:

1.3.5	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՁԴ.5	Գնահատել թե ինչպես է հնարավոր մեդիան և տեխնոլոգիան օգտագործել տեղեկատվությունը աղավաղելու, չափազանցնելու և սխալ ներկայացնելու նպատակով: Գնահատել թվային տեղեկատվական աղբյուրների, այդ թվում վեբ կայքերի կողմնակալությունը:
2	ՀՄԳ9.ԹԳԾ	**ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
2. 1	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները
2.1.1	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕԳՏ.1	Հաշվողական արտիֆակտները/աշխատանքները բարելավելու նպատակով փնտրել/գտնել բազմատեսակ տեսանկյուններ:
2.1.2	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕԳՏ.2	Գնահատել և կատարելագործել հաշվողական արտեֆակտները/աշխատանքները, դրանք ավելի օգտագործելի և հասանելի դարձնելու համար:
2.1.3	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕԳՏ.3	Ցուցադրել թե ինչ եղանակներով է տվյալ ալգորիթմը կիրառվառվում տարբեր ոլորտների խնդիրները լուծելու համար: Ճանաչել առօրյա կյանքի տարբեր ոլորտներում առկա ինվարիանտները/կայուն չփոփոխվող ֆունկցիաները/հատկությունները կամ քանակական միավորները
2. 2	ՀՄԳ9.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը
2.2.1	ՀՄԳ9.ԹԳԾ.ՀԱՂ.1	Փնտրել և ներառել թիմակիցների և օգտատերերի արձագանքը, օգտատերերի կարիքներին համապատասխան լուծումը կատարելագործելու համար:
2.2.2	ՀՄԳ9.ԹԳԾ.ՀԱՂ.2	Համագործակցությամբ հաշվողական արտիֆակտներ/աշխատանքներ մշակելիս բաշխել առաջադրանքները և պահպանել նախագծի ժամանակացույցը:
2.2.3	ՀՄԳ9.ԹԳԾ.ՀԱՂ.4	Փաստաթղթավորել նախագծային որոշումները օգտագործելով տեքստ, գրաֆիկներ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ բարդ և խճճված համակարգչային ծրագրեր մշակելիս:
2. 3	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕՊՏ	Թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ անհատական աշխատանքը և համագործակցությունը օպիմալացնելու նպատակով կատարել հետազոտություն:
2.3.1	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕՊՏ.1	Հաշվողական արտիֆակտներ ստեղծելիս, համագործակցել բազմաթիվ աջակից/ներդրողների հետ օգտագործելով այնպիսի ռազմավարություններ, ինչպիսիք են ամբողխային աղբյուրաստեղծումը (crowdsourcing), կամ հարցումները:
2.3.2	ՀՄԳ9.ԹԳԾ.ՕՊՏ.2	Բազմաթեսակ մշակույթներից եկող և տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատող մարդկանց միջև կապվազությունը բարելավելու նպատակով իրագործվող նախագծի վրա աշխատելիս օգտագործել համագործակցային գործիքներ և մեթոդներ
3	ՀՄԳ9.ՍՐՔ	**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**
3. 1	ՀՄԳ9.ՍՐՔ.ԱՇԽ	Հասկանալ թե ինչպես են սարքերը աշխատում և հատուկ առաջադրանքների համար ընտրել ու օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն
3.1.1	ՀՄԳ9.ՍՐՔ.ԱՇԽ.1	Նկարագրել թե համակարգ կազմելու նպատակով ինչպես են գործում հաշվողական սարքերի ներքին և արտաքին մասերը:
3.1.2	ՀՄԳ9.ՍՐՔ.ԱՇԽ.2	Մոդելավորել թե առաջադրանքներ կատարելու նպատակով ինչպես են համակարգչային սարքը և ծրագիրը միասին աշխատում որպես միասնական համակարգ:
3.1.3	ՀՄԳ9.ՍՐՔ.ԱՇԽ.3	Համեմատել ծրագրային հավելվածների, համակարգային ծրագրերի և սարքերի շերտերի միջև աբստրակցիայի և փոխազդեցության մակարդակները:

3. 2	ՀՄԳ9.ՍՐՔ.ԽԼԾ	Օգտագործել խնդրների լուծման եղանակներ, համակարգչային սարքերի և ծրագրերին առնչվող խնդիրները լուծելու համար:
3.2.1	ՀՄԳ9.ՍՐՔ.ԽԼԾ.1	Մշակել ուղեցույցներ, որոնք պարունակում են համակարգային խնդիրների լուծման եղանակներ, և որոնք օգտագործելով մյուսները կարող են ճանաչել և ուղղել սխալները:
3. 3	ՀՄԳ9.ՍՐՔ.ՑՆՑ	Հասկանալ թե ինչպես և հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
3.3.1	ՀՄԳ9.ՍՐՔ.ՑՆՑ.1	Ճանաչել տվյալների ներկայացման տարրատեսակ մոտեցումները, դրանց լավ կողմերն ու թերությունները:
3.3.2	ՀՄԳ9.ՍՐՔ.ՑՆՑ.2	Մոդելավորել պրոտոկոլների դերը ցանցով և ինտերնետով տվյալներ փոխանցելիս:
3.3.3	ՀՄԳ9.ՍՐՔ.ՑՆՑ.3	Գնահատել ցանցերի մասշտաբավորումն ու հուսալիությունը, նկարագրելով ռաուտերների, սվիչերի, սերվերների, տոպոլոգիայի և հասցեավորման միջև փոխհարաբերությունները:
3.3.4	ՀՄԳ9.ՍՐՔ.ՑՆՑ.4	Տալ օրինակներ, որոնց նկարագրում են թե ինչպես զգայուն տվյալները կարող են ազդեցություն կրել չարամիտ նպատակով կիրառվող համակարգչային ծրագրերից և այլ հարձակումներից:
4	ՀՄԳ9.ԱՄՏԾ	**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ և ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
4. 1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ	Ընդհանրացման, մասնատման և աբստրակցիայի միջոցով ստեղծել նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
4.1.1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.1	Օգտագործել բլոկ սխեմաներ կամ կեղծ կոդ բարդ խնդիրները, որպես ալգորիթմեր հասցեավորելու/լուծելու համար:
4.1.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.2	Ներկայացնել տվյալները օգտագործելով գաղտնագրման բազմատեսակ սխեմաներ:
4.1.3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.3	Կատարելագործել հաշվարկային մոդելները, հիմնվելով այն տվյալների վրա, որոնք ստեղծվել են նույն այդ մոդելների միջոցով:
4.1.4	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.4	Օգտագործել ցանկեր, պարզ փոփոխականները կրկնողաբար օգտագործելու փոխարեն լուծումները պարզեցնելու և հաշվարկային (computational) խնդիրները ընդհանրացնելու համար:
4.1.5	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.5	Մասնատել խնդիրը ավելի փոքր բաղադրիչների՝ օգտագործելով համակարգային վերլուծություն, և այնպիսի կառուցվածքային տարրեր ինչպիսիք ընթացակարգերը, մոդուլները, և/կամ օբյեկտները:
4.1.6	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.6	Բացատրել, թե ինչպես է աբստրակցիան/վերացությունը թաքցնում առօրյա օբյեկտներում/ապրանքներում/սարքերում ներկառուցված հաշվողական համակարգերի հիմքում ընկած ծրագրի իրականացման մանրամասները:
4.1.7	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.7	Թարգմանել բիթերի մեկ ռեպրեզենտացիայից մյուսը, օգտագործելով իրական կյանքի երևույթներ, ինչպիսիք են նիշերը, թվերը և նկարները:
4.1.8	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՌԵՊ.8	Ստեղծել տվյալների ինտերակտիվ վիզուալիզացիաներ, օգտագործելով ծրագրային գործիքներ, ինչով հնարավոր է մյուսներին օգնել ավելի լավ հասկանալ իրական կյանքում հանդիպող երևույթները:
4.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՈԴ	Իրականա կյանքի դեպքերի/իրադարձությունների ռեպրեզենտացիան ընդհանրական մոդելների միջոցով:
4.2.1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՈԴ.1	Օգտագործելով հաշվարկային գործիքներ հավաքագրել տվյալներ և վերափոխել դրանք առավել օգտակար կամ հուսալի դարձնելու համար:
4.2.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՈԴ.2	Սիստեմատիկորեն նախագծել և մշակել ծրագրեր ավելի լայն լսարանների համար, ներկառուցելով օգտատերերից ստացվող արձագանքները:

4.2.3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՈԴ.3	Որևէ երևույթից կամ գործընթացից հավաքագրված տվյալների տարբեր տարրերի միջև հարաբերությունները ներկայացնելու նպատակով ստեղծել հաշվարկային մոդելներ:
4. 3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված ծրագրավորման լեզուների ալգորիթմերի մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
4.3.1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.1	Բաղդատել խնդիրները և ենթախնդիրները մասերի այնպես, որ ավելի դյուրի դառնա համակարգչային ծրագրերի նախագծումը, իրականացումը և վերանայումը:
4.3.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.2	Ստեղծել որոշ պարամետրերով ընթացակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր է կոդը առավել լավ կամզակերպել և դյուրինացնել դրա վերաօգտագործումը: (Հավանաբար տեղափոխել բարձր դասարան)
4.3.3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.3	Խորհուրդ տալ թե ինչպես բարելավել հաշվողական/համակարգչային սարքի դիզայնը, հիմնվելով վերլուծության վրա, որը ցույց է տալիս թե ինչպես են օգտատերերը շփվում սարքի հետ:
4.3.4	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.4	Մասնատել (բաժանել կտորների) խնդիրները, ստանալով ավելի փոքր և ավելի դյուրորեն կառավարելի ենթախնդիրներ և դրա միջոցով հստակեցնել և դյուրինացնել համակարգչային ծրագրի մշակման գործընթացը:
4.3.5	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.5	Օգտագործել իտերատիվ/կրկնվող գործընթաց, համակարգչային ծրագրի մշակումը պլանավորելու համար՝ ներառելով մյուսների տեսակետերը և հաշվի առնելով օգտատերերի նախընտրությունները:
4.3.6	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.6	Փոփոխել, վերախմբավորել, խառնել կամ միավորել առկա ծրագրի հատվածներ, նոր սեփական աշխատանք ստեղծելու, որևէ նոր բան մշակելու կամ եղածին ավելի առաջադեմ առանձնահատկություններ ավելացնելու համար:
4.3.7	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.7	Թեստավորել և ուղղել (գտնել և ուղղել) ծրագրի կամ ալգորիթմի սխալները՝ համոզվելով որ այն աշխատում է նախատեսվածին համապատասխան:
4.3.8	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.8	Ուսուցչի ուղղորդմամբ, համագործակցելով ընկերների հետ, համակարգչային ծրագրի մշակման, իրագործման և վերանայման/ստուգման փուլերում, ստանձնել տարբեր դերեր:
4.3.9	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.9	Նկարագրել թե ինչպիսի ընտրություններ/որոշումներ են կայացվել համակարգչային ծրագրի մշակման փուլում, օգտագործելով կոդի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
4.3.10	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.10	Ստեղծել նախատիպեր, որոնք օգտագործում են հաշվարկային խնդիրներ լուծելու համար ալգորիթմեր, հիմնվելով աշակերտի նախնական գիտելիքների և անձնական հետաքրքրությունների վրա:
4.3.11	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.11	Ստեղծել թվային արտիֆակտներ/աշխատանքներ՝ օգտագործելով համակարգչային ծրագրի ներսում ընթացակարգեր, տվյալների և ընթացակարգերի կոմբինացիաներ, կամ անկախ բայց փոխկապակցված ծրագրեր:
4.3.12	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԾՐԳ.12	Նախագծել և մշակել հաշվարկային արտիֆակտներ/աշխատանքներ, աշխատելով թիմերով և օգտագործելով համագործակցության գործիքներ:
4. 4	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԷՖԿ	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները
4.4.1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԷՖԿ.1	Ճանաչել թեստավորման/ստուգման պարզ սցենարները: Սիստեմատիկորեն տեստավորել և կատարելագործել ծրագրերը, օգտագործելով բազմակողմանի թեստավորման սցենարների լայն ընտրանի:

4.4.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԷՖԿ.2	Հիմնավորել որոշակի հսկողական կառույցների (specific control structures) ընտրությունը, այն ժամանակ երբ առկա վտանգների և առավելությունների մեջ մտնում են ծրագրի իրականացման, ընթերցելու կարողության և դրա կատարողականին առնչվող խնդիրներ, և բացատրել կատարված ընտրությունների ու կայացված որոշումների առավելություններն ու թույլ կողմերը:
4.4.3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ԷՖԿ.3	Գնահատել տվյալների տարրերի կազմակերպման եղանակին և տվյալների պահպանման տեղին առնչվող առավելություններն ու վտանգները/թերությունները:
4. 5	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ, ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ.1	Ստեղծել պարզորեն անվանված փոփոխականներ, որոնք ներկայացնում են տվյալների տարբեր տեսակներ և դրանց կոնկրետ արժեքների վրա կատարել գործողություններ:
4.5.2	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ.2	Փաստաթղթավորել ծրագրերը, այնպես, որ լինի առավել դյուրին դրանց տրամաբանությանը հետևելը, թեստավորելը կամ դրանցում առկա սխալներն ուղղելը:
4.5.3	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ.3	Մշակել նախագծեր, որոնք տվյալներ հավաքագրելու և փոխանակելու նպատակով, միավորում են համակարգչային սարքերի և ծրագրերի բաղադրիչները:
4.5.4	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ.4	Սիստեմատիկորեն ճանաչել/գտնել և ուղել համակարգչային սարքերի և դրան մասերի խնդիրները:
4.5.5	ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՍՄ.5	Նախագծել և աստիճանաբար/իտերատիվ կերպով մշակել հաշվարկային արտիֆակտներ/աշխատանքներ, որոնք ունեն գործնական միտումնավորություն, անհատապես արտահայտվելու նպատակ, կամ թիրախավորում են հասարակական մի խնդիր, ընդորում այնպես, որպեսզի հրամաններ կատարելու համար օգտագործվեն իրադարձություններ/դեպքեր:

Առարկայական չափորոշչային վերջնարդյունքներ - Ավագ դպրոց

1	ՀՄԳ12.ՀՄՀ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ	Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրներից վերականգնվելու եղանակները, արդյունավետ կերպով պայքարել կիբեր բռնարարության/կռվարարության դեմ:
1.1.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.1	Համեմատել սարքերը և տեղեկատվությունը չարտոնված հասանելիությունից պաշտպանելու ծրագրավորողների կողմից կիրառվող եղանակները:
1.1.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.2	Բացատրել անվտանգությանն առնչվող այն խնդիրները, որոնց առկայությամբ պայմանավորված ստեղծվում են կոմպրոմիսային/փողզիջումային համակարգչային ծրագրեր:
1.1.3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.3	Կառուցել միջոցներ և ռազմավարություններ կիբեր բռնարարության և կռվարարության դեմ պայքարելու համար:
1.1.4	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.4	Զարգացնել վեբ միջավայրում դրական ներկայություն (օր.՝ թվային ռեզյումե, պորտֆոլիո, սոցիալական մեդիայում ներկայություն):
1.1.5	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.5	Ճանաչել տեղխնոլոգիայի օգտագործման այն եղանակները, որոնք նպաստում են ցկյանս ուսումնառությանը:

1.1.6	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.6	Քննարկել հաշվողական տեղխնոլոգիաների սոցիալական, տնտեսական և մշակութային ազդեցությունը:
1. 2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական ասպեկտները:
1.2.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ.1	Քննարկել և քննադատել այն օրենքներն ու կանոնակարգերը որոնք ազդեցություն ունեն ծրագրային ապահովման մշակման և օգտագործման վրա:
1.2.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ.2	Հասկանալ թվային աշխատանքներին առնչվող տեղական և միջազգային օրենքները և կանոնակարգերը և վերլուծել դրանց ազդեցությունը թվային գաղտնիության, անվտանգության, մտավոր սեփականության և ցանցային հասանելիության վրա:
1. 3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱԶԴ	Քննել տեխնոլոգիայի, օգնական տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիբեր հանցագործությունների ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱԶԴ.1	Գնահատել հաշվողական արտիֆակտները/աշխատանքները և առաջարկել եղանակներ, որոնցով հնարավոր է առավելագույնի հասցնել հասարակության վրա դրանց դրական ազդեցությունը և նվազեցնել բացասականը:
1.3.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱԶԴ.2	Գնահատել հավասարության, հասանելիության ազդեցությունը գլոբալ աշխարհում հաշվողական ռեսուրսների բաշխվածության վրա:
1.3.3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱԶԴ.3	Կանխատեսել թե ինչպես կարող է էվոլյուցիա ապրել և էլ ավելի զարգանալ մեր մշակույթի որոշ ասպեկտներ հեղափոխած հաշվողական նորարարությունը:
2	ՀՄԳ12.ԹԳԾ	**ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
2. 1	ՀՄԳ.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները
2.1.1	ՀՄԳ12.ԹԳԾ.ՕԳՏ.1	Համեմատել ծրագրավորման բազմաթիվ լեզուները և քննարկել ինչպես են դրանց առանձնահատկությունները դարձնում դրանք առավել հարմար տարբեր տեսակի խնդիրներ լուծելու համար:
2. 2	ՀՄԳ12.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը
2.2.1	ՀՄԳ12.ԹԳԾ.ՀԱՂ.1	Խմբային ծրագրավորման նախագծերում, օգտագործել տարբերակի հսկողության համակարգեր, ծրագրավորման ինտեգրված միջավայրեր (integrated developmetn environments), ինչպես նաև համագործակցության գործիքներ և գործելակերպ (կոդի փաստաթղթավորում).
2. 3	ՀՄԳ12.ԹԳԾ.ՕՊՏ	Թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ անհատական աշխատանքը և համագործակցությունը օպիմալացնելու նպատակով կատարել հետազոտություն:
2.3.1	ՀՄԳ1212.ԹԳԾ.ՕՊՏ .1	Գնահատել համակարգչային ծրագրի առանցքային որակական հատկանիշները, այնպիսի գործընթացների միջոցով, ինչպիսիք են կոդի վերանայումը (code review)
3	ՀՄԳ12.ՍՐՔ	**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**
3. 1	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ	Հասկանալ թե ինչպես են սարքերը աշխատում և հատուկ առաջադրանքների համար ընտրել ու օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն

3.1.1	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ.1	Նկարագրել թե ինչ եղանակներով են հաշվողական համակարգերը սարքերի բաղադրիչների միջոցով իրագործում տրամաբանությունը, ներմուծումն ու արտահանումը:
3.1.2	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ.2	Դասակարգել օպերացիոն համակարգի ծրագրի դերերը:
3. 3	ՀՄԳ.ՍՐՔ.ՑՆՑ	Հասկանալ թե ինչպես և հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
3.3.1	ՀՄԳ12.ՍՐՔ.ՑՆՑ.1	Նկարագրել այն խնդիրները, որոնք ազդում են ցանցի գործունեության վրա (օր:՝ թողունակությունը, ծարնաբեռնվածությունը, ուշացումը և տոպոլոգիան)
4	ՀՄԳ12.ԱՄՏԾ	**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ և ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
4. 1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ	Ընդհանրացման, մասնատման և աբստրակցիայի միջոցով ստեղծել նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
4.1.1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ.1	Օգտագործել տվյալների վերլուծության գործիքներ և տեխնիկաներ, բարդ համակարգերը ներկայացնող/ռեպրեզենտացնող տվյալներում նմանություններ և օրինաչափություններ ճանաչելու համար:
4.1.2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ.2	Վերլուծել լայնամասշտաբ հաշվողական խնդիր և չանաչել ընհանրացմանը ենթակա նմանություններ և օրինաչափություններ, որոնք կարող են լուծման համար կիրառելի լինել:
4. 2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՈԴ	Իրականա կյանքի դեպքերի/իրադարձությունների ռեպրեզենտացիան ընդհանրական մոդելների միջոցով:
4.2.1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՈԴ.1	Նկարագրել թե ինչպես է արհեստական բանականությունը առաջ տանում բազմաթի համակարգչային ծրագրերի և ֆիզիկական համակարգերի զարգացումը
4. 3	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված ծրագրավորման լեզուների ալգորիթմերի մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
4.3.1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.1	Օգտագործել և հարմարեցնել դասական ալգորիթմերը հաշվարկային խնդիրներ լուծելու նպատակով:
4.3.2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.2	Նկարագրել ռեկուրսիվ/վերադարձող ալգորիթմի կատարման/գործարկման ընթացքը/քայլերի հաջորդականությունը:
4.3.3	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.3	Կառուցել խնդիրների լուծումներ՝ օգտագործելով աշակերտների կողմից ստեղծված բաղադրիչներ, ինչպիսիք են ընթացակարգերը, մոդուլները և/կամ օբյեկտները:
4.3.4	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.4	Ցուցադրել կոդի վերաօգտագործումը, ստեղծելով ծրագրային լուծումներ, որոնց համար օգտագործվել են գրադարաններ և հավելվածային ծրագրի միջերես (Application Program Interface (API))
4.3.5	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.5	Մշակել և օգտագործել թեստային սցենարների հավաքածու, հաստատելու/վավերացնելու այն, որ ծրագիրը կատարում է նախագծման մասնագրերով (specifications) նախատեսված գործողությունները:
4.3.6	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.6	Մշակել համակարգչային ծրագրեր բազմատեսակ հաշվարկային հարթակների (multiple computing platforms) համար:
4.3.7	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.7	Փոփոխել գոյություն ունեցող ծրագիրը, ավելացնելով լրացուցիչ ֆունկցիոնալություն և քննարկել դրա նախատեսված/մտադրված և չնախատեսված ազդեցությունները (օր:՝ մեկ այլ ֆունկցիոնալության վերացումը կամ փչանալը):

4. 4	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները
4.4.1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ.1	Գնահատել ալգորիթմերը դրանց արդյունավետության, ճշգրտության և պարզության տեսակետից:
4.4.2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ.2	Համեմատել և հակադրել տվյալների ֆունդամենտալ կառուցվածքները և դրանց օգտագործելիությունը/կիրառելիությունը:
4. 5	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ, ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ.1	Ընտրել տվյալների հավաքագրման գործիքներ և մեթոդներ, գեներացնելու տվյալների այնպիսի հավաքածուներ, որոնք պաշտպանում են պնդումը կամ առավել փաստարկված են հաղորդում տեղեկատվությունը:
4.5.2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ.2	Գնահատել մոդելների և սիմուլյացիաների կարողությունը ենթադրությունների առավել կատարյալ տարբերակները թեստավորելու և պաշտպանելու համար:
4.5.3	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ.3	Պլանավորել և մշակել ծրագրեր լայն լսարանների համար, օգտագործելով ծրագրային լուծումների կյանքի ցիկլի գործընթացը (software life cycle process):

Թեմա 2-1	**Դասարան 2**
1.1.1	**Կոդ ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.1**
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք 3րդ մակարդակ	
Անվտանգ կերպով օգտագործել Էլեկտրական/էլեկտրոնային սարքերը	
Վերջնարդյունքներ	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա՝ - Բացատրել էլեկտրականության հետ աշխատանքի գլխավոր սկզբունքներ, ինչ կարելի անել իսկ ինչ ոչ - Ցույց տալ էրգոնոմիկ տեսակետից այն ճիշտ դիրքերը, որոնք կարելի է ընդունել համակարգչի կամ հաշվողական այլ սարքերի հետ աշխատելիս Պատկերացում ունենալ էլեկտրական սարքերի հետ աշխատանքի մասին Կարողանալ հարմարավետ ձեւավորել աշխատանքային տեղը	
Բովանդակություն	

